«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Օրենսգրքի 5-րդ հոդվածը լրացնել՝

1) հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Այն գործատուները, որոնք սույն օրենսգրքի 18.1-ին հոդվածի համաձայն հանդիսանում են գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվողներ, կարող են չընդունել ներքին իրավական ակտեր, բացառությամբ սույն օրենսգրքի 248-րդ հոդվածով նախատեսված դեպքի: Ներքին իրավական ակտեր չընդունելու դեպքում գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուն ներքին իրավական ակտերով կարգավորման ենթակա պայմանները ներառում է աշխատանքային պայմանագրում, որի օրինակելի ձևը սահմանում է աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի ղեկավարը:».

2) հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Գործատուի մոտ աշխատողի համար հասանելի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի առկայության դեպքում, գործատուի կողմից ներքին և անհատական իրավական ակտերին աշխատողի պատշաճ կարգով իրազեկում է համարվում նաև այդ համակարգով իրազեկումը:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-ին հոդվածով.

«Հոդված 18.1. Գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուի մոտ աշխատանքային հարաբերությունների կարգավորման անաձնահատկությունները

1. Գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատու են համարվում օրենքով սահմանված պահանջները բավարարող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործատուն դադարում է հանդիսանալ գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտ, ապա դադարման օրվանից մեկ ամիս հետո մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը գործատուի վրա չեն տարածվում սույն օրենսգրքով գերփոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող գործատուների համար սահմանված կարգավորումները:»:

Հոդված 3. Օրենսգրքի 113-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետում «(անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու)» բառերը փոխարինել «(անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանվելու)» բառերով.

Հոդված 4. Օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասում «(անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման)» բառերը փոխարինել «(անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանվելու)» բառերով.

Հոդված 5. Օրենսգրքի 144-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Արտաժամյա աշխատանք կարող է կատարվել կողմերի համաձայնությամբ կամ սույն օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ գործատուի պահանջով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենսգրքի 153-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լրացուցիչ և հատուկ ընդմիջումների քանակը, տևողությունը և հանգստանալու տեղը սահմանվում են կողմերի համաձայնությամբ և ամրագրվում աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա կազմակերպությունների աշխատողների համար լրացուցիչ և հատուկ ընդմիջումների քանակն ու տևողությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 160-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 160. Ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդներ

1. Ամենամյա երկարացված արձակուրդ տրամադրվում է աշխատանքի հատուկ պայմաններում աշխատող առանձին կատեգորիայի աշխատողների, որոնց աշխատանքը կապված է մտավոր և հուզական գերլարվածության կամ մասնագիտական ռիսկի հետ: Ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ամենամյա լրացուցիչ արձակուրդ տրամադրվում է՝

1) այն աշխատողներին, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի.

2) չնորմավորված աշխատանքային օրով աշխատողներին.

3) հատուկ բնույթի աշխատանքներում աշխատողներին:

3. Ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդների տևողությունները սահմանվում են կողմերի համաձայնությամբ և ամրագրվում աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում:

4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա կազմակերպությունների աշխատողների համար ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդների տևողությունները,

ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 161-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 168-րդ հոդվածը «113-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից հետո լրացնել «1-ին,» բառով:

Հոդված 11. Օրենսգրքի 174-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4-րդ մասով.

«4. Գործատուի համաձայնությամբ օտարերկրյա ուսումնական հաստատություններում իր մասնագիտական որակավորումը բարձրացնելու կամ անմիջապես աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված նոր հմտություններ ձեռք բերելու կամ զարգացնելու համար աշխատողին կարող է տրվել ուսումնական արձակուրդ ուսման ողջ ժամանակահատվածում, բայց ոչ ավելի քան 2 տարի:».

Հոդված 11. Օրենսգրքի 183-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 183. Աշխատանքի վարձատրությունը աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի իջեցնելու անհնարինության դեպքում

1. Այն աշխատողներին, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի, վճարվում է հավելում, կողմերի համաձայնությամբ որոշված չափով, որը պետք է ամրագրվի աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված դեպքերում պետական և

տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա կազմակերպությունների աշխատողներին վճարվող հավելման չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։»։

Հոդված 12. Օրենսգրքի 184-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 184. Արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի վարձատրությունը

1. Արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի վճարվում են հավելումներ, որոնց չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ և ամրագրվում աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում։

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակա կազմակերպությունների աշխատողների համար արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի վճարվող հավելման չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։»։

Հոդված 13. Օրենսգրքի 185-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական կամ հիշատակի օրերին կատարած աշխատանքի համար աշխատողին վճարովի այլ հանգստյան օր տրամադրելու դեպքում, դրա տևողությունը պետք է ավելի երկար լինի, քան նրա կողմից կատարված աշխատանքի տևողությունը, սակայն ոչ ավել, քան դրա կրկնակին։ Աշխատողին տրամադրվող հանգստի տևողությունը որոշվում է կողմերի համաձայնությամբ։»։

Հոդված 14. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետ։